ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3313-Ա « 02 » հուլիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-Ի
Հ.2891-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Արտակ Ադուրյանի դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2026 թվականի հունիսի 5-ի հ.2891-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, հաշվի առնելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.20022026-01-0313 վկայականը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Ն/39766-26 եզրակացությունը.

1. Երևանի քաղաքապետի 2026 թվականի հունիսի 5-ի «Զեյթուն 5ա փողոցի հ.50 հասցեում գտնվող բնակելի տան մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու մասին» հ.2891-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում և նախաբանում՝ «Զեյթուն 5ա փողոցի հ.50 բնակելի տան մի հատվածի» բառերը փոխարինել «Մ.Յաղուբյան փողոցի հ.50 հասցեում գտնվող օժանդակ շինության» բառերով.

2) որոշման նախաբանում՝ «հ.20062025-01-0022 վկայական» բառերը փոխարինել «հ.20022026-01-0313 վկայական» բառերով.

3) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«1. Մ.Յաղուբյան հ.50 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Արտակ Ադուրյանին պատկանող 24քմ մակերեսով օժանդակ շինության գործառական նշանակությունն, առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և

նախագծային փոփոխությունների, սահմանել հասարակական և ընդգրկել ոչ բնակելի ֆոնդում՝ որպես հասարակական /«ՀՀՇՆ 30-01-2023» պահանջներին չհակասելու պայմանով/:»:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ